ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԿԵՌՔ ԱՄԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

618
Թ-45

ԱՋՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՂ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1936

18 APR 2013

7963

1010
40475

618 | Թ-45
Թեոդոր
Կնոջ
ամլությունը

13/IV-93
9

04 AUG 2010

ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

618
Թ-45

Պրոֆ. Լ. Բ. ԹԵՈԴՈՐ

ԿՆՈՋ ԱՄԼՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1010
40475

2-րդ ուղղված հրատարակությունից

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՂ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1936

ՀԱՅԿ-ՍՍՀ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ամուլ (անզավակ) կոչվում է այն ամուսնությունը, երբ կինը չի ծնում։ Այսպիսի ամուսնություններ շատ կան։ Բազմաթիվ երկրների գիտնականների հավաքած տվյալների համաձայն, ամուսնությունների 10%-ից վոչ պակասը, այսինքն՝ 100 ամուսնությունից 10-ն անցնում են ամուլ։ Դրանից տուժում է վոչ միայն ընտանիքն, այլև պետությունը։ Կապիտալիստական երկրներում, ուր աշխատանքն անխնա կերպով շահագործվում է, ուր տիրում է կապիտալի անսահման կամայականությունը և ուր միլիոնավոր գործազուրկներ կան, ամուլ ամուսնությունների թիվը գնալով աճում է։

Աշխարհումս մի երկիր կա միայն, վորն այդ կողմից բացառություն է կազմում. դա խորհուրդների երկիրն է։ Մեր երկրումն է

վոր ծննդաբերությունն աճում է, իսկ մահացումը պակասում։ Բնակչության թիվն աճում է։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատագրեց աշխատավոր մասսաներին։ Սոցիալիստական շինարարությունը, վորին ղեկավարում է բոլշևիկյան կուսակցությունը, վերացրեց գործազրկությունը և ապահովեց աշխատավորների բարեկեցության անընդհատ աճը, վորով և մեջտեղից վերացրեց այն պատճառները, վորոնք կապիտալիստական յերկրներում ստիպում են կանանց հեռու մնալ յերեխա բերելուց։

Մեզ մոտ ևս լինում են ամուլ, այսինքն անզավակ ամուսնություններ, բայց դրանց պատճառը վոչ թե սոցիալական, այլ պարզապես բժշկական պայմաններն են։ Մարդու կամ կնոջ հիվանդության պատճառով ամուսնությունը մնում է անզավակ։ Կինը գրկվում է մայր լինելու յերջանկությունից, ամուսնությունը կատարյալ բավարարություն չի տալիս։

Գրքույկիս նպատակն է հասկացնել բանվորուհուն և կոլխոզուհուն, թե ինչ բան է ամլությունը, ինչից է առաջ գալիս, ինչպես կանխել նրան և ինչպես ազատ մնալ նրանից։

Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄՎԱԾ ԿՆՈՋ ՍԵՌԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Կնոջ սեռական անդամները լինում են արտաքին ու ներքին։

Արտաքին կոչվում են այն մասերը, վոր դրսումն են՝ ցայլը (լոբոկը), սեռական մեծ (ամոթության) շրթները, ծլիկը (կլիտորը) և կուսական թաղանթը։

Ներքին կոչվում են կնոջ հետևյալ սեռական որգանները՝ հեշտոցը, արգանդը, արգանդի փողերը (ձվատարները, ֆալոպյան փողերը), ձվարանները։

Ցայլ է կոչվում փորի պատի ամենաստորին մասը, այսինքն այն տեղը, ուր առջևից միանում են կոնքի վոսկրները։ Կնոջ ցայլը, մեծաքանակ յենթամաշկային ճարպ պարունակելու հետևանքով, փոքրիկ դուրս է

ծծված։ Ցայլը սովորաբար ծածկված է թեթևակի դանդաթել մազերով։ Ցայլից դեպի վար, սրբանի (հետանցքի) ուղղությամբ, տեղավորված են մաշկային յերկու հատ ծալքեր՝ մի-մի հատ յերկու կողմից։ Այս ծալքերը մեծ սեռական (ամոթույքի) շրթներ են կոչվում։

Մեծ սեռական շրթները դրսի կողմից (դեպի ազդրերը) նույպես մազերով է ծածկված, իսկ ներսի կողմում մազեր չկան։ Սրանք ասիճանաբար վերջավորվում են փոքր սեռական շրթների մոտ։ Այս վերջինները ներկայացնում են բարակ մաշկային փոթիկներ, վորոնք սովորաբար ավելի մութ գույնի յեն լինում։ Մեծ շրթները վոր հետ քաշենք, սրանք ավելի լավ կերեվան։ Տարբեր կանանց մոտ տարբեր յերկայնություն ունեն դրանք և ընդհանրապես փափուկ են, նուրբ և բարակ։ Մանր շրթները ծածկում են հեշտոցի մուտքը։ Առջևում իրար կցվելով (յերբ կինը վոտքի յե կանգնած), նրանք շրջապատում են այստեղ գտնվող ու ցայլի ներքևում դուրս պրծած սեռական բլրակը, այսինքն՝ ծլիկը։

Ծլիկը (կլիտորը) 3 — 4 միլիմետր յերկարություն ունեցող մի փոքրիկ բլրակ է։ Ծլիկում կան ներվային շատ վերջավորություններ և արյունատար անոթներ։ Սեռական հարաբերության ժամանակ, արյունալցման հետևանքով, ծլիկն ուռչում-ձգվում է, ներվային վերջավորությունները գրգռվում են. այս հանգամանքը նշանակություն ունի՝ սատանալու համար այն բավականությունը, վորը կապված է սեռական հարաբերության հետ։ Ծլիկից միքիչ ներքև միզանցքի արտաքին ծակն է. դրանից ել ներքև մի ուրիշ ծակ կա, վոր հեշտոցն է տանում. դա հեշտոցի մուտքն է։

Հեշտոց տանող մուտքը ծածկված է բարակ, նուրբ թաղանթով, վորն աղջիկների մոտ մի կամ միքանի ծակեր է ունենում։ Այդ թաղանթը կոչվում է կուսական թաղանթ։ Առաջին հարաբերության ժամանակ թաղանթը պատռվում է, այնպես վոր կանանց մոտ մնում են միայն նրա աննշան մնացորդները։ Հեշտոցի մուտքը, ինչպես և փոքր ու մեծ շրթների ներսի կողմը, միշտ միքիչ թաց է լինում՝ շնորհիվ այն փոքրաքանակ հեղանյութին, վոր դուրս է հոսում հեշտոցից և արտադրվում է այսպես կոչված գեղձերում։

Գեղձեր են ասվում այն խողովակաձև կամ կծկաձև գոյացումները, որ ծածկված են հատուկ բջիջներով։ Այս բջիջներն են, որ արտազատում են առանձնահատուկ հեղուկություններ։ Ցերկու այդպիսի գեղձեր՝ ամենամեծերը՝ գետեղված են հեշտոցի մուտքին և թացացնում են նրան. դրանից է ահա, որ հեշտոցի մուտքը միշտ մի տեսակ թացություն ունի, որը պահպանում է նրան քերծվածքներից, ճաքճքումներից և հեշտացնում է սեռական անդամի ներս մտցնելը։ Կուսական թաղանթի մյուս կողմում, կոնքի ներսում, գետեղված է հեշտոցը, որ պատկանում է նեբքին սեռական որգաններին։

Հեշտոցը մկանային մի խողովակ է՝ ներսից նուրբ, թաց թաղանթով պատած։ Հեշտոցի յերկարությունը՝ 7 — 9 սանտիմետր է, իսկ լայնությունը 2 — 3 սանտիմետր։ Բայց հեշտոցի թե յերկարությունը և թե լայնությունը կարող է փոխվել, որովհետև նա ընդունակություն ունի հեշտությամբ ձգվելու։ Թե վորքան շատ կարող է ձգվել հեշտոցը, դա յերևում է հենց նրանից, որ ծննդաբերության պահին նա այնքան է լայնանում, որ նրանով դուրս է

յելնում պտուղը (նորածինը)։ Հեշտոցը վերջավորվում է դեպի վեր ծռված ու լայնկեկ փակ ծայրով (այսպես կոչված կամարները), որի մեջ դուրս է պրծնում արգանդավիզը։ Այսպիսով արգանդը միանում է



Կնոջ նեբքին սեռական որգանները.
1. Հեշտոցը, 2. Արգանդավիզը, 3. Արգանդը, 4. Ձվարանը, 5. Փողի ծոպերը, 6. Փողը։

արտաքին սեռական անդամների հետ հեշտոցի միջոցով։ Հեշտոցը գետեղված է կոնքում, միզապարկի և ուղիղ աղիքի (հաստանցքի աղիքի) մեջտեղում։

Արգանդը մի տանձաձև պինդ մկանային մարմին է։ Չհղիացած կնոջ արգանդը 8 — 9

սանտիմետր յերկարություն և 6 — 7 սանտիմետր լայնություն ունի։ Նա յերկու մասից է բաղկացած՝ մարմնից ու վզից։ Յերկարության 9 սանտիմետրից բուն մարմնին բաժին է հասնում մոտավորապես 6 սանտիմետր, իսկ վզին՝ 3 սանտիմետր։ Ինչպես վերն ասվեց, արգանդավզի մի մասը դուրս է պրծած հեշտոցում։ Արգանդավզի մեջտեղում բացված է մի ծակ, որ տանում է դեպի արգանդավզի անցքը։ Այս ծակը կոչվում է արգանդավզի արտաքին բերան։ Քանի դեռ կինը յերեխա չի ծնել, այս բերանը կլոր ձև ունի, որը սակայն ծննդաբերությունից հետո ճեղքի ձև է ստանում։ Արգանդավզի անցքը 2 — 3 սանտիմետր յերկարություն ունի և վերջավորվում է նեղ ծակով, որ տանում է արգանդի խոռոչը՝ այսպես կոչված արգանդի ներքին բերանը։ Արգանդավիզը լեցուն է թանձր լորձունքով, որ խցանի պես փակում է արգանդի մուտքը։

Արգանդի խոռոչը յեռանկյունի ձև ունի ու ներսից պատած է նուրբ լորձաթաղանթով։ Այս յեռանկյունու ներքին անկյունը հենց այն ներքին բերանն է, որի մասին

վերն ասվեց։ Մյուս յերկու անկյունները զետեղված են արգանդի հատակին։ Նրանցից դեպի յերկու կողմ ուղղվում են յերկու



Հղի արգանդը։
1. Արգանդի արտաքին բերանը, 2. Ներքին բերանը, 3. Գոտղով ձուն, 4. Արգանդի խոռոչը։

նեղ վկանային փողեր՝ 3 — 4 միլիմետր հաստությամբ և 9 — 10 սանտիմետր յերկարությամբ։ Այս փողերը կոչվումեն արգանդային փողեր կամ ձվատար փողեր։

Զվարար փողերը վերջավորվում են ձագարաձև անցքով (փողաբերանով), որը բացվում է կնոջ վերովայնախոռոչում (փորի խոռոչում)։ Այս փողաբերանի յեզրերը հարթ չեն, նրանք ծոպիկների յեն նման։ Այս ծոպիկները կոչվում են ֆիմբրիաներ։ Ներսի կողմից փողերն ու ֆիմբրիաները ծածկված են թաց, նուրբ լորձամաշկով։ Յեթե այս մաշկը դիտենք խիստ խոշորացնող ապակիով (միկրոսկոպով), ապա կտեսնենք, որ նա ծածկված է շատ բարակ, նուրբ աղվամազով,

Կնոջ ձվարանը։
1. Զուն, 2. Հաստուն փուչիկը, 3. Հասնող փուչիկները։

որն անդադար թրթռում է, և այդ թրթռումն ուղղված է փողաբերանից դեպի արգանդը։

Զվարանները. Փողաբերանից վոչ հեռու, արգանդի յերկու կողմում, գետղված են ձվարանները։ Առողջ կնոջ ձվարանը մի թանձր, փոքրիկ մարմին է, որ տափակ սալորի յե նմանում։ Զվարանի յերկարությունն է 3—4 սանտիմետր, լայնությունը 2—3 սանտ. և հաստությունը 1 — 1 և կես սանտիմետր։ Զվարանները գտնվում են փորի խոռոչի ստորին մասում, կոնքի ներսում և անմիջական հաղորդակցություն չունեն փողերի հետ։

Ի՛ՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ԿՆՈՋ ՍԵՌԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Կանացի սեռական ապարատի ամենագլխավոր մասը ձվարանն է։

Զվարանի հիմնական դերը այսպես կոչված կանացի ձու արտադրելն է։ Զուն մի փոքրիկ փուչիկ է, որ կարելի յե տեսնել միայն միկրոսկոպով (մանրադիտակով)։ Յերբ նա բեղմնավորվի, զարգանում է սաղմը։ Զվարաններից յուրաքանչյուրը մեծ քանակու-



Հասած փուչիկը (շատ խոշորացրած)
1. Կնոջ ձուն, 2. Փուչիկի հեղուկը, 3. Փուչիկի հետագա պատռման տեղը։

թյամբ այսպիսի ձվեր է պարունակում իր մեջ։ Նրանք հասունանում են (մեծանում են) ձվարանում և ապա, հասունանալուց հետո, դուրս են ընկնում այնտեղից։ Յերկու

ձվարանում գոյացած տասնյակ հազարավոր ձվերից կնոջ ամբողջ կյանքի ընթացքում հասունանում են միայն քչերը՝ մոտավորապես 500 հատ։ Ձվերը հասունանում են վոչ թե կնոջ ամբողջ կյանքի ընթացքում, այլ մոտավորապես միայն 30 — 35 տարում, այսինքն 14 — 15 տարեկան հասակից սկսած մինչև 45—50 տարեկան հասակը։ Ամսական հասունանում է միայն մի ձու. ձվի այս հասունացումը սաստիկ անդրադառնում է կնոջ որգանիզմի վրա։ Ինչպես հայտնի յե, նույն հասակում (14 — 15 տարեկանից մինչև 45 — 50 տարեկան հասակը) կինը դաշտան է ունենում ամեն ամիս։

Ի՞նչ է դաշտանը (ամսականը, ռեգուլը)։ Դաշտանն այն արյունն է, վոր ամիսը մի անգամ յերեվան է գալիս կնոջ սեռական անդամներից։ Այժմ հայտնի յե, վոր դաշտանը կապ ունի ձվի հասունացման և ձվարանից դուրս գալու հետ։ Գիտենք նույպես, վոր 14 — 15 տարեկան հասակից, յերբ առաջին անգամ յերեվան է գալիս դաշտանը, աղջկա որգանիզմն սկսում է սրագ զարգանալ. նա ավելի արագորեն է մեծանում. նրա կուրծքը լցվում, աճում է, ազդրերը և ուսերը

կլորանում են, ցայլի և կոնատակի մազերի աճն արագանում է, փոխվում է աղջկա բնավորությունը։ Նա ավելի հասուն է դառնում։

Մյուս կողմից հայտնի է, որ 45—50 տարեկան հասակում, երբ դաշտանը վերջանում է, կնոջ օրգանիզմն սկսում է արագությամբ թառամել, վրա է հասնում արագ ծերությունը։ Այս փոփոխությունները կախված են ձվարանի գործունեությունից։ Այսպիսով մենք տեսնում ենք, որ ձվարանը միայն ձվերի զարգացման վայրը չէ, այլև այն օրգանն է, որից կախում ունի ամբողջ օրգանիզմի աշխատանքը։ Ձվարանից զրկված կինն, ըստ էության, դադարում է կին լինելուց. նա դառնում է անսեռ մի արարած։

Ձվարանի՝ կնոջ օրգանիզմի վրա ունեցած ուժեղ ներգործությունը կախված է այն հատուկ նյութերից, որոնք ձվարանում են արտադրվում։ Ձվերը, որոնց մասին խոսեցինք վերևում, զետեղված են ձվարանում, հատուկ փուչիկների մեջ. այս փուչիկներից է, որ (տես նկար 12-րդ էջում) կնոջ արյան մեջ են մտնում շատ սակավ քանակությամբ այն հատուկ նյութերը, որոնք ուժեղ ազդեցություն ունեն օրգանիզմի վրա. սրանք հորմոններ են կոչվում։ Ձվարանից արյունն անցնող հորմոնը կոչվում է կանացի հորմոն։

Այսպիսով տեսնում ենք, թե որքան բարդ աշխատանք է տանում ձվարանը. մեկ կողմից նա ձու է հասցնում, մյուս կողմից ազդում է ամբողջ օրգանիզմի վրա։ Դրա համար է, որ կանայք այնպիսի դժվարությամբ են տանում ձվարանների կորուստը։ Ցերը որևէ հիվանդության հետևանքով ձվարանը քայքայվի կամ յերբ ոպերացիա անելով կտրեն, հեռացնեն նրան, կինը տառապում է մի շարք խանգարումների ձեռքից. նա կորցնում է դաշտանը, դադարում է յերեխա բերել, արագ ծերանում է ու թառամում։

Ձվերի հասունացումը։ Վերն արդեն նշեցինք, որ ձվարանում գոյացած տասնյակ հազարավոր ձվերից հասնում, զարգանում են մոտ 500 ը միայն։ Բեղմնավորվել կարող է միայն հասունացած ձուն։ Հասունացումը կատարվում է այսպես. ձուն զետեղված է հեղուկով լի հատուկ փուչիկի մեջ։ Ձուն մեծանում է փուչիկում, հեղուկը գնալով շատանում է, փուչիկը ձգվում, լայնանում է

1010/404 75
ՀՍՍՀ-ՍՍՀ

և, վերջապես, ճնշմանը չդիմանալով՝ պատռվում է։ Ձուն հեղուկի հետ միասին ձվարանից թափվում է փորի խոռոչը։ Ամիսը մի անգամ հասնում է միայն մի ձու (նկար 14-րդ էջում)։ Ինչպես արդեն գիտենք, ձվարանի մոտ է գտնվում փողաբերանը (ձվատարը)՝ ծոպերով (ֆիմբրիաներով)։

Սովորաբար հենց այս փողաբերանն է ընկնում ձուն։ Ծոպիկներն անդադար թրրռում են և փողաբերանն ընկած ձուն աստիճանաբար հրվում է առաջ դեպի արգանդը։

Հղություն առաջացնելու համար անհրաժեշտ է, որ հասած ձուն բեղմնավորվի։

ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Բեղմնավորում՝ կամ հղիություն տեղի չի ունենում այն ժամանակ, երբ կնոջ հասունացած ձուն միանում է տղամարդու սերմնաթելիկի (սաղմնաթելիկի) հետ։ Սերմնաթելիկներն ընկնում են կնոջ սեռական օրգանները՝ տղամարդու հետ սեռական հարաբերություն ունենալիս, երբ տղամարդու սեռական անդամից սերմը թափվում է կնոջ հեշտոցը։ Տղամարդու սերմը մի ծորուն հեղուկ է, որը արտադրվում է նրա սեռական գեղձերում (ամորձիքում)։ Այս հեղուկը միկրոսկոպով դիտելիս՝ տեսնում ենք, որ նրանում շարժվում են մանրիկ թելիկներ, որոնք և կոչվում են սաղմնաթելիկներ կամ սպերմատոզոիդներ։ Ամեն անգամ, սեռական



Սերմնաթելիկները (սպերմատոզոիդները) շատ մեծացրած։

հարաբերության միջոցին, յերկու հարյուր միլիոնի չափ այդպիսի սաղմնաթելիկներ են ժայթքում։ Սաղմնաթելիկը գոյանում է ամորձիքում այնպես, ինչպես ձուն՝ ձվարանում։ Յուրաքանչյուր սաղմնաթելիկ կազմված

ե գլխիկից և պոչիկից (նկ. 19-րդ եջ.)։ Գլխիկը ծառայում է ձվի բեղմնավերման համար։

Բեղմնավորումը կատարվում է հետևյալ յեղանակով։ Սեռական հարաբերության միջոցին սաղմնաթելիկներն ընկնում են հեշտոցը, իսկ այստեղից՝ արգանդավզում գտնվող լորձային թանձր խցանը։ Այստեղից սաղմնաթելիկները բարձրանում են վեր, դեպի արգանդը։ Այս առաջխաղացումը գլխավորապես կախված է սաղմնաթելիկի պոչից։ Յերկար պոչիկը մասավորապես այնպես է շարժվում, ինչպես սավառնակի պրոպելլերը։ Պոչիկի այս շարժումների շնորհիվ է, որ սաղմնաթելիկը կարողանում է նախ մղվել դեպի վեր՝ արգանդը, և ապա՝ դեպի ձվատար փողերը։

Հարկավոր է նշել, որ միլիոնավոր սաղմնաթելիկներից շատերը վոչնչանում են հեշտոցում, շատերը՝ արգանդավզում, արգանդում, ձվատար փողերում, և շատ քչերն են միայն, որ հասնում են ձվին։ Այն դահին, յերբ սաղմնաթելիկն առաջ է շարժվում դեպի ձուն, այս վերջինը դանդաղ կերպով շարժվում է (հրվում է) սաղմնաթելիկին ընդառաջ։ Հանդիպումը տեղի յե

ունենում փողում. սաղմնաթելիկից մեկն ամենից առաջ է հասնում ձվին. սա իսկույն գլխիկով ծակում է ձվի պատյանը ու ներս թափանցում։ Հենց որ նա միանա ձվի հետ, մնացյալ սաղմնաթելիկները դադարեցնում են իրենց շարժումները։ Բեղմնավորված ձուն սկսում է արագորեն զարգանալ (նկար 21 եջում)։ Միլիոնավոր սաղ-



Սերմնաթելիկի հանդիպումը ձվի հետ
1. Ձուն բեղմնավորող սերմնաթելիկը,
2. Ձվի կորիզը։

մնաթելիկներից միայն մեկն է բեղմնավորում ձուն, մնացյալները ներծծվում են ու վոչնչանում։ Բեղմնավորված ձուն արագ

աճում է և միաժամանակ շարունակում է առաջ հրվել դեպի արգանդը։ Այս իսկ ժամանակից սկսած կնոջ որգանիզմում առաջանում են փոփոխություններ, որոնք նախապատրաստում են նրան հղության համար։

Ամենից ավելի արգանդն է փոփոխվում, մանավանդ նրա ներսի մակերեսը՝ լորձաթաղանթը (պատյանը), որը հաստանում, դառնում է ավելի փխրուն, հյութեղ, լիարյուն։ Այս բոլորը հող է պատրաստում ձվի համար, ասես պարարտացնում, փխրունացնում է նրան։ Բեղմնավորված ձուն՝ արգանդը հասնելով՝ այստեղ լավ պայմաններ է գտնում ամրանալու համար։ Բայց մենք գիտենք, որ ամեն ձու չի բեղմնավորվում։ Յեվ, ուրեմն, յեթե հղիություն տեղի չի ունենում, ապա այդ հաստացած, հյութեղ, փխրուն, լիարյուն թաղանթն սկսում է քայքայվել. առաջանում է արյունահոսություն։ Այս արյունահոսությունը լինում է ամիսը մի անգամ և կոչվում է մենստրուացիա կամ դաշտան։ Հետևաբար, ամիսը մի անգամ յերևացող արյունահոսությունը վկայում է այն մասին, որ ձվի հասունացումը տեղի

յե ունենում, բայց բեղմնավորում չի կատարվել։ Պարզ է, որ հղիությունն սկսվելուն պես դաշտանը (ամսականը) դադարում է։ Դաշտանը բացակայում է նաև այն ժամանակ, յերբ կինը ծիծ է տալիս յերեխային, որովհետև այդ պահին ձվարանները թույլ են աշխատում։

Դաշտանը, ինչպես արդեն ասվեց, սկսվում է 14—15 տարեկան հասակից։ Դաշտանի յերևան գալը վկայում է այն մասին, որ ձվարանում սկսել են ձվերը հասունանալ, հետևաբար և աղջիկը կարող է հղիանալ։ Բայց այդ չի նշանակում, որ աղջիկն այնքան հասած է, որ կարող է մայր դառնալ։ Այս հասակի աղջիկը դեռ նոր է սկսում հասնել արագորեն, բայց սեռական կյանքի և հղիության համար դեռ լիովին պատրաստ չէ։ Վաղաժամ սեռական կյանքը և վաղաժամ հղիությունը շատ վատ են ներգործում նրա առողջության վրա։

Հարց է ծագում, թե ձուն ի՞նչպես է ստանում արգանդին յեվ ի՞նչպես է սրնվում։ Զվատարում բեղմնավորվելով՝ ձուն հրվում է դեպի արգանդը։ Այս առաջշարժման միջոցին նա աճում և մեծանում է։

Արգանդը հասնելու պահին ձուն իրենից՝ ներկայացնում է արդեն մի մեծ փուչիկ գնդասեղի գլխի մեծությամբ. այս փուչիկն արդեն ծածկված է նրբաթել աղամագով կամ այսպես կոչված մազմզուկով։ Միկրոսկոպով դիտելիս, դրանք նման են շաֆուկ-յելուսների։ Այս մազմզուկների շնորհիվ է ահա, որ ձուն թափացնում է արգանդի նուրբ լորձաթաղանթը, ապա՝ ավելի ևս խորանալով՝ հասնում է նրա արյունատար անոթներին։ Մազմզուկների միջոցով ել կատարվում է պտուղի (սաղմի) սնունդառությունը, որ ստացվում է մոր արյունից՝ պտուղի արգանդում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում։

ԱՄԼՈՒԹՅՈՒՆ

Ինչու համար շատ ամուսնություններ ամուլ են անցնում։ Վերն ասվածից յերևվում է, որ կնոջ սեռական որգաններն այնպես են կազմված, որ հղիություն պետք է տեղի ունենա։ Այնինչ շատ կանայք իրենց ամբողջ կյանքի ընթացքում մնում են անզավակ, չնայելով, որ յերեխա ունենալու փափագ ունեն։

Ամլություն ասվածը մի հիվանդություն է, որը կանխելու համար անհրաժեշտ է ամեն տվյալ դեպքում նրան առաջացնող պատճառներն իմանալ։

Բազմաթիվ դեպքեր կան, յերբ ամուլ ամուսնությունների պատճառը տղամարդն է հանդիսանում։ Արդեն ասել ենք, որ բեղմնավորում առաջացնելու համար անհրաժեշտ է, որ ձուն սաղմնաթելիկով բեղմնավորվի։ Բայց բանն այն է, որ կան շատ տղամարդիկ, որոնց սերմն անկարող է բեղմնավորել կանացի ձուն։ Այդպիսի տղամարդու սերմը միկրոսկոպով դիտելիս՝ հաճախ իսպառ չի հաջողվում գտնել նրա մեջ սաղմնաթելիկներ. նրանք բացակայում են. հաճախ ել թեև գտնում ենք սաղմնաթելիկներ, բայց դրանք բոլորովին անշարժ են. մինչդեռ առողջ տղամարդու սաղմնաթելիկներն անդադար շարժվում են։ Անշարժները մեռած սաղմնաթելիկներ են. նրանք անկարող են հասնել ձվին ու բեղմնավորել այն։

Տղամարդու սերմի այսպիսի աննորմալության պատճառն ինչ է։ Դա մեծ մասամբ հետևանք է դրանից առաջ ունեցած սուսա-

ԿՆՈՋ ԱՍԼՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՀԱՃԱԽԱԿԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սեռական որգանների թերազարգացումը։ Հաճախ պատահում է, որ տղամարդը բոլորովին առողջ է, նրա սերմը թերություն չունի, մինչդեռ կինը չի հղիանում։ Այսպիսի դեպքերում պատճառը պետք է փնտռել կնոջ մեջ։ Շատ անգամ նրանից ենք իմանում, որ նա յերբեք դաշտան (ամսական) չի ունեցել, կամ թե նրա դաշտանը շատ սահմանափակ է լինում, հաճախ 2 — 3 ամիսը մի անգամ։

Սովորաբար այս կանայք բժիշկներին պատմում են, որ նրանք զարգացել են դանդաղ, առաջին անգամ դաշտան ունեցել են 19—20 տարեկան հասակում։ Այլյուն շատ քիչ է արտազատվել։ Ամսականները խիստ ցավոտ են յեղել։ Այսպես են պատմում այն կանայք, որոնց սեռական որգանները լավ չեն զարգացած ու աղջկա սեռական որգանների յեն նմանում։

Այսպիսի կանանց կուրծքն (ստինքը), առանց բացառության, վատ է զարգացած, թևատակին ու ցայլին մազը սակավ է, արտաքին սեռական որգանները լավ չեն զարգացած, հեշտոցը նեղ է, կամարները տափակ, արգանդավիզը, յերկայն, նեղ կամ շատ փոքր, արգանդը փոքր, պինդ, ձվարանները գործում են վատ։ Ձվերը կամ իսպառ չեն հասունանում ձվարաններում կամ մնում են թերահաս։ Պարզ բան է, որ այսպիսի թերազարգացած սեռական որգաններ ունեցող կինը չի կարող հղիանալ։

Թերազարգացման տարբեր աստիճաններ են լինում։ Կան կանայք, որոնց թերազարգացումն այնքան մեծ է, որ ամլությունը բուժելն անկարելի յե դառնում։ Լինում են նաև դեպքեր, յերբ թերազարգացումն այնքան ել մեծ չե, և սեռական որգանները կարող են դեռ զարգանալ։ Հաճախ պատահում է, որ նման կանայք ապրում են սեռական կյանքով, բայց յերկար ժամանակ (որինակ 4—5 տարի) հղիություն չի առաջանում, իսկ հետո հղիանում են։ Շատ անգամ, ճիշտ է, այդորինակ հղիությունը մինչև վերջը չի տեվում, և աբորտ է տեղի ունենում։ Հետեվյալ հղիությունը նույնպես կարող է աբորտով վերջանալ։ Միայն աստիճանաբար, սեռական կյանքից ազդված, աբ-

գանդը լրիվ է զարգանում և այն ժամանակ հետագա հղիությունները տեղում են մինչև վերջը։

Թերազարգացած կանանց ամլությունը կարող է շատ պատճառներից առաջացած լինել։ Արդեն ասացինք, որ այսպիսի կանանց ձվարանը վատ է աշխատում։ Այս հանգամանքը պատճառներից մեկն է։ Բայց նույնիսկ այն ժամանակ, երբ ձվարանը հասուն ձվեր է տալիս, հղիություն այնուամենայնիվ կարող է չառաջանալ, որովհետև արգանդը լավ չի զարգացած։ Մենք արդեն գիտենք, որ հղիություն առաջ բերելու համար պետք է արգանդի լորձաթաղանթում պատրաստի հող լինի ձուն ամրանալու համար։ Այնինչ թերազարգացած արգանդում նման փոփոխություններ կամ իսպառ չեն լինում կամ լինում են շատ անհնարին չափով։ Դրա հետեվանքով կամ ձուն բոլորովին չի ամրանում, այսինքն հղիություն չի առաջանում, կամ ամրանում է այնքան թույլ, որ 1—1 և կես ամսից պոկվում է, և արորտ է առաջանում։

Այսպիսի կանանց ամլության պատճառը յերբեմն հեշտոցի թերազարգացած լինելն է, այսինքն հեշտոցի նեղ անցք ունենալը, կամարների տափակ լինելը։ Դրա համար, սեռական հարաբերություն ունենալիս, սերմը հեշտոցում չի մնում, այլ իսկույն դուրս է թափվում այնտեղից՝ առանց արգանդն անցնելու։ Բացի դրանից, նման կանանց հեշտոցի լորձն այնքան թթու յե, որ սաղմնաթելիկները նրա մեջ արագ վոչնչանում են, որի հետեվանքը լինում է ամլություն։

Դրա համար է ահա, որ յերեխա ունենալ ցանկացող և թերազարգացած սեռական որգանների տեր կանայք, հղիություն առաջանալու դեպքում, պետք է վերին աստիճանի զգույշ լինեն, որպեսզի բեղմնավորված ձուն արգանդում հաստատուն մնա։ Իսկ յեթե հղիություն ընդհանրապես չի առաջանում, ապա անհրաժեշտ է բժշկի դիմել, որովհետև շատ դեպքերում հնարավոր է պայքար մղել թերազարգացման դեմ։ Այս պայքարը մղվում է ամբողջ որգանիզմն ամրացնելու և հատուկ բժշկության միջոցով։ Կանոնավոր սննդառություն, նորմալ հանգստություն ու քուն, ֆիզկուլտուրա— ահա այս աննորմալությունը բուժելու գլխավոր միջոցները։

Սակայն փրկել կնոջը թերազարգացման հետևանքով առաջացած ամլությունից, հաճախ, բավական դժվար է լինում, իսկ յերբեմն նաև անկարելի։ Դրա համար մանկությունից սկսած, յերբ 13—14 տարեկան աղջկա սեռական որգանները դեռ զարգանում են, անհրաժեշտ է հոգ տանել նրա որգանիզմի ու սեռական ապարատի լավ զարգացման մասին, հետևել, վոր աղջիկը կանոնավոր կյանք վարի, յերկար ժամանակ թարմ ոդի մեջ լինի, վոր նրա աշխատելու և հանգստանալու ժամերը կանոնավոր կերպով իրար հաջորդեն, վոր նա լավ սնվի ու ֆիզկուլտուրայով զբաղվի։ Դրանով կանոնավորապես կզարգանան նրա որգանիզմը, նրա սեռական որգանները, և հետագայում առաջը կառնվի նրա ամլության։

Լայն հնարավորություններ են ընձեռվում մեր Միության դեռահաս սերնդին. նրա համար ստեղծված են այն բոլոր պայմանները, վոր անհրաժեշտ են որգանիզմի կանոնավոր աճման ու զարգացման գործում։

Ամլություն առաջացնող պատճառներից գլխավորը սուսանակն է։ Ամլությունը շատ անգամ հետևանք է կնոջ սուսանակով հիվանդանալուն։ Մենք արդեն գիտենք, վոր տղամարդու ամլության ամենահաճախ կըրկնվող պատճառը սուսանակն է։ Ավելի ևս շատ փոփոխություններ է առաջացնում այս հիվանդությունը կնոջ մեջ։ Սուսանակով հիվանդ կամ այդ հիվանդությունն առաջներն ունեցած կինը հաճախ թարախոտ սալպինգիտ է ունենում։ Այս սալպինգիտը սաղմնաթելիկների համար թունավոր է։

Սաղմնաթելիկը հեշտոցն ընկնելով՝ վոչնչանում է, նրա շարժումները դադարում են, ու նա անկարող է հասնել արգանդին և բեղմնավորվել ձուն։

Սուսանակի ժամանակ հաճախ արգանդավիզն է հիվանդանում։ Նրա վրա խոցեր են առաջանում, արգանդավզից թարախ է արտազատվում և, իհարկե, այսպիսի արգանդավիզ ընկած սաղմնաթելիկն խեղուն ել վոչնչանում է։

Հաճախ բորբոքվում է նաև արգանդը։ Նրա լորձնաթաղանթն այնքան է փոխված, վոր այլևս չի կարող ծառայել ձվի ամրացման համար։ Յեվ յեթե ձուն արդեն բեղմնավորված ել լինի, ապա նա արգանդը

հանելով՝ չի կարող այնտեղ ամրանալ ու վիժվում է դուրս. այստեղից հասկանալի է, որ հղիություն չի առաջանում։

Սակայն ձվի ու սաղմնաթելիկի իրար հանդիպումը սուսանակով հիվանդ ժամանակ շատ անգամ առհասարակ տեղի չի ունենում, որովհետև սուսանակը չափազանց մեծ փոփոխություններ է առաջացնում արգանդի փողերում, ուր թարախ է գոյանում. թաւ բախից փողերը փակվում են կամ թարախոտ ուռեցքների են փոխվում և, ինչպես ասում են, դառնում են անանցանելի։ Պարզ է, որ հղիության մասին խոսք լինել չի կարող յեթե փակված է այն անցքը, որով առաջ են շարժվում ձուն ու սաղմնաթելիկը։ Փողերի այս յեղանակով խցվելը ամլության ամենահաճախակի պատճառներից մեկն է։

Յերբեմն փողերը լրիվ չեն խցվում, այլ բորբոքման հետևանքով նեղանում, անձուկ են դառնում. փողերում գոյանում են կապեր ու ծալքեր։ Այսպիսի դեպքերում սաղմնաթելիկը յերբեմն կարողանում է հանդիպել ձվին, բայց ձուն դեռ արգանդը չհասած՝ խրվում է փողում, որով և արտարգանդային հղիություն է առաջացնում։

Յերբ սուսանակից վնասվում է ձվարանը, նրա շուրջը հաճախ գոդվանքներ են առաջանում։ Վնասվում է ինքը ձվարանը և այն ժամանակ կամ խոպառ ձվեր չեն գոյանում ձվարանում, կամ նրանք չեն կարող ձվարանից ձվածար փողերն ընկնել, մի բան, որ նույնպես կնոջ ամլություն է առաջացնում։

Պետք է ասել, որ սուսանակի ժամանակ շատ հաճախ ամլությունն իսկույն վրա չի հասնում, այլ միայն անդրանիկ յերեխան ծնելուց հետո։ Սա բացատրվում է նրանով, որ ամուսնությունից հետո յերբեմն կնոջը հաջողվում է հղիանալ այն միջոցին, յերբ սուսանակային վարակը դեռ փողերին ու ձվարանին չի անցել։ Նման դեպքերում, յեթե կինը մինչև վերջն է հասցրել իր հղիությունը, սուսանակային վարակը ծննդաբերությունից հետո վեր է բարձրանում, հարվածում է սեռական ապարատի մյուս մասերին և հետագայում արդեն ամլություն է առաջանում։ Սրա համար է, որ սուսանակով հիվանդ կանանց հետ-ծննդաբերական շրջանն այնքան վտանգավոր է լինում։

Սուսանակից առաջացած ամլությունը

բուժելը թեև շատ է դժվար, բայց հնարավոր է։

Հետ ծննդաբերական հիվանդություններ։ Սուսանակը շատ անգամ հիվանդությունների դուռ է բաց անում նաև հետ-ծննդաբերական շրջանում, բայց նույնպիսի փոփոխություններ կարող է առաջացնել նմանապես վոչ-սուսանակային բորբոքումը։ Հաճախ պատահում է, վոր ծննդաբերությունից հետո կանայք հիվանդանում են սեռական որգանների յերբեմն այնքան ծանր տեսակի բորբոքումով, վոր մահով է վերջանում։ Նման բորբոքումներն առաջանում են նրանից, վոր ծննդաբերության միջոցին վարակները (միկրոբներ) են ընկնում սեռական որգանները։ Վարակն անցնում է արգանդին, փողերին և ձվարաններին, առաջացնում է սաստիկ բորբոքում, խիստ փոխում է արգանդի ու փողերի լորձաթաղանթը և ընդհանրապես այն հետևանքն է ունենում, ինչ վոր ասվեց վերևում սուսանակի համար, ու կինը դառնում է ամուլ։

Լավ ծննդաբերական տներում այսորինակ բորբոքումներ համարյա չեն պատահում։ Դրա հակառակ, ծանր տեսակի բորբոքումով

են վերջանում այն ծննդաբերությունները, վոր կատարվում են տատմերի ձեռքով։ Հազարավոր կանայք զոհ են դառնում իրենց թեթևամտությանը և ագիտությանը, տասնյակ հազարներ ցմահ ինվալիդ են դառնում, տասնյակ հազարներ ամուլ են դառնում և ընդմիշտ զրկվում են մայր լինելու յերջանկությունից։

Աբորտը (վիժումը) հաճախ նույնպես ամլությամբ է վերջանում։ Աբորտ անելը շատ վնասակար է։ Հաճախ աբորտից հետո կնոջ սեռական անդամները հիվանդանում են. կարող է պատահել, վոր նա դադարի հղիանալ։ Կնոջ սեռական որգանները, ըստ յերևույթին նույնիսկ հաջող անցած աբորտներից, կարող են այնքան վնասվել, վոր կինը դառնում է ամուլ։ Այս դեպքերում դաշտանն սկսում է պակասել, յերբեմն էլ բոլորովին չքանում է, ու կինն սկսում է պառավել։ Այս ամենից պարզ է, վոր վնասվում է մի շատ կարևոր որգան, վորպես ին ձվարանն է։

Թե վորքան վնասակար բան է աբորտ անելը, այդ պետք է իմանան մեր Միության բոլոր աշխատավոր կանայք։ Այս դեպ-

քում ևս առանձնապես վտանգավոր են այն աբորտները, որ կատարում են կեղտոտ, տգետ տատմերների ձեռքով։ Սրանց ձեռքով կատարված աբորտի պաճառով կինը վոչ միայն ամուլ է դառնում, այլև հաճախ զրկվում է իր աշխատունակությունից և մինչև իսկ կյանքից։

Յողի Ներարկումը, իբրեվ ամլության պատճառ։ Ամլություն են առաջացնում այն միջոցառումներից միքանիսը, որ կերառուն կանայք հղիությունից զերծ մնալու համար։ Առանձնապես վտանգավոր են արգանդը մուծվող զանազան ներարկումները։ Կանանցից շատերը, հղիությունը կանխելու համար, դիմում են մանկաբարձուհիների, տատմերների ոգնության. ամենից հաճախ յոդն է, որ սրանք ներարկում են կնոջ արգանդը։ Այս միջոցը չափազանց վնասակար է։

Ներարված յոդը հաճախ ընկնում է արգանդի փողերն ու փորն ու փորի խոռոչը։ Յոդն առաջացնում է նուրբ թաղանթների բորբոքում, կազմվում են միակցումներ (սրաշչենիյե), որոնք շրջապատում են ձվարանը. ձուն չի կարողանում դուրս գալ այն-

տեղից, ձվատարի անցքը փակվում է, հետևաբար և հղիություն տեղի ունենալ չի կարող։ Հաճախ պատահում է, որ այս միջոցին դիմող կանանց մոտ դաշտանները պակասում ու շատ անգամ էլ ընդմիշտ դադարում են, մի բան, որ վկայում է ձվարանի խորապես վնասված լինելու մասին։

Այսպես, ուրեմն, հղիությունը կանխելու նպատակով արված արգանդի ներարկումները չափազանց վտանգավոր են ու վնասակար։

Ամլության այլ պատճառներ։ Լինում են դեպքեր, յերբ կանանց արգանդը շատ ծռված է լինում կամ առջև կամ դեպի հետև կամ կողքի։

Առաջ կարծում եյին, թե արգանդի այսպիսի անկանոն դիրքը հաճախ պատճառ է դառնում ամլության։ Բայց այժմ մենք գիտենք, որ դա չի խանգարում հղիություն առաջանալուն։ Իսկ յեթե արգանդի անկանոն դիրք ունեցող կինը չի հղիանում, ապա այդ կախված է վոչ թե արգանդի անկանոն դիրք ունենալուց, այլ այն պատճառներից, որ նրան առաջացրել են։ Այսպես, մենք գիտենք, որ արգանդը վատ զարգանալիս, ձվարանը թույլ աշխատելիս, արգանդի

գանդը հաճախ խիստ առՀև է ծռված լինում։ Այս դեպքում կինը կարող է տառապել ամլությամբ, բայց դա կախված է վոչ թե արգանդը ծռված լինելուց, այլ ձվարանի, արգանդի վատ աշխատելուց։ Յերբ արգանդը դեպի հետ կամ կողքի յե ծռված լինում, ամլության պատճառը հաճախ սեռական որգանների բորբոքումն ու դրա հետ կապված՝ արգանդի վնասումներն են։

Ամլության պատճառներից մեկն են հանդիսանում նայեվ կանացի սեռական որգանների ուռեցքները։

Կինը կարող է ամլությամբ տառապել, յեթե նրա արգանդի վրա ուռեցք (՝զալար) կա։ Այսպես, որինակ, հաճախ ամուլ են լինում այն կանայք, վորոնց արգանդի վրա մկանային պալարներ (ֆիբրոմներ) կան։ Արգանդի քաղցկեղը (ռակը) սկզբնական շրջանում չի խանգարում հղիության առաջանալուն, բայց յերբ քաղցկեղը շարունակում է մեծանալ, հղիություն չի կարող տեղի ունենալ։ Զվատար փողերի ուռեցքներն ամեն անգամ ամլություն չեն առաջացնում, այլ այն դեպքերում միայն, յերբ ուռեցքը փակում է փողերի անցքը։

Ձվարանների ուռեցքի պատճառով ամլություն առաջ է գալիս միայն այն ժամանակ, յերբ այդ ուռեցքից քայքայվում է ձվարանը։ Այդ դեպքում հաճախ դաշտանն ել դադարում է։ Բայց ընդհանրապես ձվարանների ուռեցքի պատճառով հաղվագյուտ դեպքերում է միայն ամլություն առաջանում։

Նվազած սեռական զգայականություն։ Շատերը կարծում են, վոր յեթե կինը սեռական հարաբերությունից լիակատար բավարարություն չի ստանում, յեթե նա՝ հարաբերություն ունենալիս՝ ճչում է անտարբեր և, ինչպես ընդունված է ասել, «սառն» է, — ապա նրանով կարելի յե բացատրել նրա ամլությունը։ Սակայն, թեև այդորինակ «սառնությունը» բնական չե, այնուամենայնիվ դա չի խանգարում հղիության առաջանալուն։ Կան շատ կանայք, վորոնք՝ չնայած իրենց նվազած զգայականությանը կամ հարաբերության ժամանակ բավարարության խսպառ բացակայությանը, հղիանում են և յերեխա բերում, այն ել վոչ թե մի անգամ, այլ շատ անգամներ։ Հայտնի յեն նաև այնպիսի դեպքեր, յերբ

կնոջը՝ ուշքը գնացած պահին՝ բռնաբարում են, և նա այնուամենայնիվ հղիանում է։

Սառնությունը հաճախ ոնանիզմի (ձեռնախաղության) հետեվանք է լինում. ոնանիզմը չափազանց վնասակար ներգործություն է ունենում որգանիզմի վրա։

Շատ անբարեհաջող ազդեցություն է թողնում կնոջ սեռական որգանների վրա վաղ սկսած սեռական կյանքը։

Հաճախ պատահում ենք այնպիսի կանանց, վորոնք 15—16 տարեկան հասակից են սկսել սեռական կյանքով ապրել, այսինքն այն ժամանակից, յերբ նրանց որգանիզմը տակավին լրիվ չի զարգացել։ Ժամանակից առաջ սկված սեռական կյանքը մի շարք խանգարումներ է առաջացնում կնոջ սեռական որգաններում, մեծ վնաս է տալիս ու կարող է ամլության հասցնել նրան։ Վաղաժամ սեռական կյանքը շատ վնասակար է։

Մյուս որգանների հիվանդությունները, իբրեվ ամլության պատճառ։ Յերբեմն ամլությամբ տառապում են այն կանայք, վորոնց սեռական որգանները միանգամայն նորմալ են։ Այս դեպքում ամլության պատճառն ուրիշ որգանների հիվանդությունների մեջ պետք է փնտռել։ Մեզ հայտնի յե, վոր չափազանց գեր կանայք կամ հազվագյուտ դեպքերում են հղիանում կամ խսպառ չեն հղիանում։ Այսպիսի կանանց դաշտանը ևս, իբրև կանոն, թույլ է լինում։ Գիտենք նմանպես, վոր խպիպ (զոբ) հիվանդությամբ կամ շաքարախտով հիվանդ կանայք շատ քիչ են հղիանում կամ խսպառ չեն հղիանում։

Սեռական որգանիզմի վրա շատ վատ ազդեցություն է ունենում խրոնիկական թունավորումը ծխախոտով՝ չափազանց շատ ծխելուց, արաղով՝ ալկոհոլը չարը գործ դնելուց, և այլ հարբեցուցիչ նյութերով (մորֆին, ափիոն և այլն)։

Սիֆիլիսով հիվանդ ամուսինները հաճախ մնում են անզավակ, վորովհետև սկված հղիությունը մինչև վերջը չի տեվում և շատ անգամ վիժումով է վերջանում։ Հաճախակի կրկնվող և ինքնաբերաբար առաջացած վիժումները հարկավոր է սիֆիլիս հիվանդությամբ բացատրել, թեև պատահում է, վոր այդ վիժումները կարող են և ուրիշ հիվանդությունների հետեվանք լինել։

Սակայն ուրիշ պատճառներ վնասելուց առաջ հարկավոր է հավաստիանալ, որ սիֆիլիս չկա։

Սրանք են ամլության պատճառները։ Տեսնում ենք, որ դրանք շատ են. դժվարին և ծանր խնդիր է ամլության պատճառներն իմանալը. դրա համար հարկավոր է շատ բան գիտենալ։ Իսկ դա մատչելի չէ միայն մասնագետ բժիշկներին։

Հետևաբար վոչ մի դեպքում չպետք է դիմել հեքիմների ու տատմերների ոգնությանը. լինելով տգետ և անվուլթ՝ նրանք կիրառում են կնոջ առողջության համար մի շարք շատ վնասակար, յերբեմն էլ կորստաբեր միջոցներ։ Այս բարդ հարցերը կարելի չէ պարզել միայն կոնսուլտացիայում, բժշկական անձնակազմի ոգնությամբ, ու այնտեղ գտնել համապատասխան բժշկություն։

ԱՄԼՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄԸ

Վորովհետև ամլության պատճառները շատ են, դրա համար էլ բոլոր դեպքերի համար բուժման միատեսակ միջոց գոյություն չունի։ Ամեն անգամ բժիշկն է, որ ճշտիվ վորոշում է ամլության պատճառները և ձեռք առնում բժշկությունը։ Կան դեպքեր, յերբ բժշկությունը կայանում է նրանում, որ վերացվում են ձվի և սպերմատոզոիդի հանդիպմանը խանգարող արգելքները։ Ուրիշ դեպքերում աշխատում են բժշկությունն այնպես տանել, որ ձվրանը հասուն ձվեր արտադրի։ Յեթե ամլության պատճառը կինը չէ, այլ մարդն է, այդ դեպքում բժշկության յենթարկվում է մարդը։

Ամլությունը բժշկելն, ընդհանուր առմամբ, այնքան էլ հեշտ գործ չէ։ Յերբեմն հարկավոր է լինում ոպերացիայի դիմել։ Ոպերացիայի յեն յենթարկվում արգանդավիզն, արգանդը և մանավանդ ձվատար փողերը, որպեսզի սրանք անցանելի դառնան։

Թե որ ամլությունն արդյունք է սպերմատոզոիդների քայքայմանը հեշտացում կամ արգանդավզում, այդ դեպքում վերջին ժամանակներն սկսել են կիրառել արհեստական բեղմնավորում։ Այս նպատակով մարդու սերմը ներարկում են կնոջ արգանդը։ Բեղմնավորման այս յեղանակը, որ լայնո-

բեն կիրառվում է անառնապահության մեջ, ներկայումս՝ որոշ դեպքերում կիրառվում է նաև մարդկանց վրա։

Վերն ասվածներից պարզ էլ թե որքան բարդ բան է ամլությունը։ Մենք գիտենք, թե կանայք ինչպիսի դժվարությամբ են տանում իրենց անզավակությունն ամեն ժամանակ։ Մենք գիտենք նույնպես՝ ինչքան դժվար է ամլությունը վերացնելը, Շատ ավելի հեշտ է այս ծանր հիվանդությունը կանխելը։

Ինչպես արդեն նշվեց, հաճախ ամլության պատճառ է հանդիսանում սեռական որգանների թերազարգացումը։ Իսկ վերջինը հետևանք է անկարգ կյանք վարելու, քիչ շարժողություն ունենալու, թարմ ոդում քիչ մնալու, հանգստություն չունենալու և անկարգ սնվելու։ Այս բոլորից էլ կարելի է խուսափել։ Միայն թե անհրաժեշտ է կանոնավոր կերպով դասավորել ժամանակը։ Աշխատանքն ու հանգիստը պետք է կանոնավորապես իրար հաջորդեն։ Հարկավոր է ամեն որ ֆիզկուլտուրայով պարապել ու միտքը պահել, որ ջուրը, ոդն ու արեվը որգանիզմն ամրացնող հզոր միջոցն են հանդիսանում։

Պետք է միտքը պահել նաև այն, որ ոգիությունը, տաքմերները ու հեքիմները հաճախ պատճառ են դառնում կանացի սեռական որգանների ջնասման։ Ժամանակ է արդեն ընդմիշտ վանել կնոջ իրավազրկության և անկուլտուրականության այս մնացուկները։

Տղամարդու հետ ամուսնանալով, կինը պետք է հավատի լինի իր ամուսնու առողջության մասին։ Դրանով նա կպահպանի իրեն ծանր հիվանդություններից և ամլությունից։ Ամուսնական կյանքի 3—4 տարիների ընթացքում յերեխա չունեցող կինը պետք է բժշկի դիմի՝ առանց բարձիթող անելու։

Կինը պետք է իմանա, որ ավելի հեշտ է ամլությունը կանխելը, քան թե բժշկելը։

ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՈՒՀՈՒ ՀՈՒՇԱԳԵՐԹԻԿԸ.

1. Աշխատիր շատ մաքուր պահել մարմինդ, մանավանդ սեռական որգաններդ։

2. Որգանիզմդ ամրացրու ֆիզկուլտուրայի ու սպորտի (մարզանքների) միջոցով։

Միաքդ պահիր, վոր միայն առողջ կինը կարող է ոգտավետ աշխատանք կատարել ու իր պետությունը կառուցել։ Միաքդ պահիր, վոր միայն առողջ կինը կարող է առողջ սերունդ արտադրել։

3. Ապագա մարդն ու կինը, ամուսնությունից առաջ, պետք է լինեն բժշկի մոտ և հավատիանան իրենց առողջական վիճակի մասին։

4. Խուսափիր պատահական սեռական հարաբերություններից, վորովհետև այդպիսով կարող ես վարակվել ծանր հիվանդությամբ՝ սուսանակով կամ սիֆիլիսով։

5. Ծննդաբերությունդ անցկացրու անպատճառ ծննդաբերական տանը։ Միաքդ պահիր, վոր տատերները դիմելով հարյուրավոր կանայք տուժել են իրենց առողջությամբ ու կյանքով։

6. Միաքդ պահիր, վոր աբորտները, թեկուզ հիվանդանոցում կատարված, վնասակար են։ Ոգտվիր հղիությունը կանխող նախազգուշական միջոցներով։ Նախազգուշական միջոցների համար դիմիր մոտակա կոնսուլտացիան։

7. Սեռական կյանքի վերաբերյալ հարցերի մասին կոնսուլտացիա դիմիր։

8. Խորհուրդների յերկրում, այն յերկրում, ուր մարդն ազատագրված է, անգավակ կանայք չպետք է լինեն։ Սոցիալիզմն իր հետ բերում է՝ ազատագրված աշխատանքի ուրախությունը, ստեղծագործական բախտավորությունը։

ՀԱՅԿՈՍՅԱՆ ՊՐՈԴԱՐԱՆ
ՀԱՅ-ՍՍՀ
Ա. ՄՈՍԿՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Առաջաբան	3
Ի՞նչպես են կազմված կնոջ սեռական օրգանները	5
Ի՞նչպես են գործում կնոջ սեռական օրգանները	13
Բեղմնավորումը	18
Ամլությունը	24
Կնոջ ամլության ամենահաճախակի պատճառները	28
Ամլության քուժումը	44
Բանվորուհու և կոլխոզուհու հուշաթերթիկը	47

Ответ. редактор *Г. А. Потенц*
Пом. техред. *Д. М. Джинибалаян*

Издание №254|5114. Сдано в набор 29 июля 1936 г
Подписано в печать 17 сентября 1936 г. Формат— А6
105x148. Об'ем 1 7|8 п. л. Тираж 500. Уполкрайлит
№С—5660. Заказ 263.

Типография Издателства „ГНО“ в г. Ростове н-Д.

«Ազգային գրադարան»
NL0281032

7963

Цена 25 կոп. Коп.

На армянском языке

Проф. Л. Б. Теодор

БЕСПЛОДИЕ ЖЕНЩИНЫ
И
КАК С НИМ БОРОТЬСЯ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“
Ростов н-Д, Ворошиловский, 27

ԴՐԱՊԱՀԱՏՍԱՏԸ
Ռոստով-Դոն, Մոսկովսկայա փող. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)